ՇՈՒՇԻՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐՈՒՄ
(1918–1920 թթ.)

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Հայոց արևելից կողմանց» ՝ Արցախ աշխարհի ազատագրական պայքարի բազմադարյան պատմության մեջ դեպքերի և դրամատիկ իրադարձությունների ընդգրկումով, որոնք խոր հետք են թողել արցախահայության պատմական ճակատագրի վրա, առանձնանում են, թերևս, 1918–1920 թվականները: Հենց այդ տարիներին էր, որ Լեռնային Ղարաբաղը դարձավ «վիճելի տարածք»: Ադրբեջանի նորաթուխ մուսավաթական կառավարությունը նպատակադրվել էր բռնազավթել պատմական Հայաստանի տարածքներից Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը: Նրա ծավալապաշտական ծրագրերը բացահայտ քաջալերում և դրանց իրականացմանը նպաստում էին Թուրքիան, որոշ ժամանակ անց՝ դաշնակից տերությունները, գլխավորապես՝ Անգլիան, իսկ Ադրբեջանի խորհրդայնացումից հետո՝ նաև բոլշևիկյան Ռուսաստանը:

Այնուհանդերձ, իրենց փառավոր նախնիների ազատատենչ ոգին ու արիությունը չկորցրած Արցախի հայությունը ծառս եղավ ոխակալ թշնամու դեմ և կենացմահու պայքար մղեց իր բնօրրան երկրի ազատության ու անկախության համար: Այդ պայքարի հենակետը դարձյալ Շուշի բերդաքաղաքն էր, որը, իրավամբ, արցախցիների համար կազմակերպական, բարոյական և քաղաքական հենարանի ռազմավարական նշանակություն ուներ:

Փետրվարյան հեղափոխությունից հետո Արցախ աշխարհն ապրում էր լիարյուն ինքնուրույն կյանքով: Ինչպես ամենուրեք, այնպես էլ Լեռնային Ղարաբաղում ստեղծվում էին տեղական իշխանության գործադիր մարմիններ: 1917 թ. մարտի 11-ին Շուշի քաղաքի Ղազանչեցոց եկեղեցում հրավիրվեց նախապատրաստական ժողով, որը քննարկեց գավառի գործադիր մարմին ընտրելու հարցը: Հաջորդ օրը՝ մարտի 12-ին, գաղտնի քվեարկությամբ տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի գործադիր մարմնի ընտրությունը, որին մասնակցեցին բնակչության բոլոր խավերի ներկայացուցիչները: Ընտրվեց 40 հոգուց բաղկացած գործադիր կոմիտե՝ Լեռնային Ղարաբաղի ներքին կյանքը ղեկավարելու համար[1]: Նշենք նաև, որ Փետրվարյան հեղափոխությունից հետո Շուշի քաղաքում ստեղծվեց բանվորական ներկայացուցիչների խորհուրդ, որին հետագայում միացան զինվորական և գյուղացիական համանուն խորհուրդները, որոնք գտնվում էին սոցիալ-դեմոկրատների ազդեցության տակ[2]:

---

[1] *Տե՛ս «Մշակ» (Թիֆլիս), 30. III. 1917:*

[2] *Տե՛ս «Նեցուկ» (Շուշի), 13. IX. 1917:*

Հոկտեմբերյան հեղաշրջումը կասեցրեց նախկին կայսրության ժողովուրդների համար փետրվարով սկսված ազատության հաղթարշավը և ազգային պետական նոր միավորումների ստեղծման գործընթացը: Այս ընդհանուր վիճակն ամբողջապես հատկանշական էր նաև Անդրկովկասին: 1917 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին Լեռնային Ղարաբաղում իշխանություն գրեթե չկար: Գավառը հեծում էր անիշխանության ճիրաններում: Գոյություն ունեցող միակ տեղական մարմինը՝ 72 անդամներից բաղկացած գործադիր կոմիտեն, լիովին անգործության էր մատնված[3]:

Համաարցախյան իշխանության բացակայության հետևանքով շարունակաբար խորանում էր գավառի տնտեսական ճգնաժամը և մեծանում սոցիալական լարվածությունը: Ստեղծված պայմաններում, բնականաբար, առաջանում է իրադրության վերագնահատման և նոր գործելակերպ մշակելու պահանջ:

1917 թ. նոյեմբերին Շուշի քաղաքում հավաքվեցին մի շարք կուսակցությունների ու քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներ և քննության առան Լեռնային Ղարաբաղը ստեղծված կացությունից դուրս բերելու հարցը[4]: Հավաքի մասնակիցները Արցախի քաղաքական հոսանքների նեկայացուցիչներից ընտրեցին տեղական իշխանության ժամանակավոր մարմին՝ «Հայ հեղափոխական կուսակցությունների ու կազմակերպությունների Ղարաբաղի ժամանակավոր խորհուրդ» (հետագայում կոչվեց «Միջկուսակցական բյուրո» կարճ անունով): Խորհրդի կազմում ընտրվեց 14 հոգի՝ հինգ դաշնակցական, երեք մենշևիկ, երեք բոլշևիկ, երեք էսէռ: Հարկ է նշել, որ հետագայում բոլշևիկները, ինչ-որ սկզբունքային պատճառաբանություններ հրապարակ բերելով, հեռացան խորհրդի կազմից[5]: Տեղին է նշել, որ խորհրդի գործունեությունը սահմանափակվում էր Շուշի քաղաքի շրջանակներում: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի չորս՝ Դիզակ, Խաչեն, Վարանդա և Ջրաբերդ գավառներին, ապա դրանք մնացել էին առանց իշխանության:

Ազգային կոմիտե ստեղծեց նաև Շուշի քաղաքի թուրք ազգաբնակչությունը[6]:

Դեպքերի անսպասելի ընթացքը (Շուշի–Եվլախ մայրուղու փակվելը, անիշխանության խորանալը և այլն) պետք է, որ սթափեցնեին հայ ազգային շահերով մտահոգվողներին: Այդ հարցերը քննարկվեցին «Միջկուսակցական բյուրոյում» և մուսուլմանների Ազգային կոմիտեում: Կայացվեց համանման որոշում. լուծարել Ղարաբաղի գործադիր կոմիտեն և փոխարենը ստեղծել ավելի ճկուն ու աշխատունակ նոր մարմին: 1917 թ. դեկտեմբերի 20-ին Շուշիում հրավիրվեց Ղարաբաղի գործադիր կոմիտեի արտահերթ նիստ: Մուսուլմանների Ազգային կոմիտեի ներկայացուցիչների և «Միջկուսակցական բյուրոյի» անդամների պահանջով գործադիր կոմիտեն հրաժարական տվեց: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ ստեղծվեց նոր մարմին, որը հայտնի է «Միջազգային» կամ «Ազգամիջյան կոմիտե» անունով: Այն

---

[3] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 30, թ. 21:*

[4] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 111, թ. 27–28:*

[5] *Տե՛ս նույն տեղում, գ. 34, թ. 48–49:*

[6] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 11:*

կազմված էր 13 հոգուց (վեց հայ, վեց մուսուլման և մեկ չեզոք անձ՝ որպես ղեկավար)[7]: Իշխանության մարմիններ ստեղծվեցին նաև տեղերում. նշանակվեցին քաղաքացիական, դատական և զինվորական լիազորներ:

Շուշիում գործող «Միջկուսակցական բյուրոյից», թուրքերի Ազգային կոմիտեից և ոչ մեկը չդարձավ ընդհանուր ճանաչում և հեղինակություն վայելող իսկական կենտրոնական իշխանություն: Անդրադառնալով այդ օրերին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող քաղաքական անցուդարձին՝ «Կավկազսկոյե սլովո» թերթը գրում էր. «Անդրկովկասի կոմիսարիատը պետք է լրջորեն մտածի քաղաքում և գավառում տեղական իշխանություն ստեղծելու մասին, առանց որի անկարելի է կյանքը նորմալ հունի մեջ դնել»[8]: Իսկապես որ, կյանքը դուրս էր եկել սովորական հունից: Եվլախ–Շուշի մայրուղուց բացի փակվեց նաև Գորիս–Ավդալլար (Լաչին)– Շուշի ճանապարհը[9]: Պարենային և ֆինանսական ճգնաժամն ընդունեց սուր բնույթ: Սովն ու համաճարակը մոլեգնում էին հայկական գյուղերում և խլում հազարավոր կյանքեր[10]:

Լեռնային Ղարաբաղի ընդհանուր վիճակն էլ ավելի թուլացրեց տեղական իշխանությունների դիրքերը և նրանց կանգնեցրեց կազմալուծման փաստի առջև: 1918 թ. հուլիսի 16-ին ինքնալուծարման ենթարկվեց «Միջկուսակցական բյուրոն»: Նրա փոխարեն ստեղծվեց նոր մարմին, որը կոչվեց «Ղարաբաղի հայ ժողովրդական ժամանակավոր կառավարություն» կամ «Կոմիսարների խորհուրդ»: Ղարաբաղը բաժանվեց երկու (Վարանդա–Դիզակ և Խաչեն–Ջրաբերդ) վարչական շրջանի և յուրաքանչյուրի համար նշանակվեց լիազոր[11]:

1918 թ. հուլիսի 22–28-ը Շուշիի թեմական դպրոցի դահլիճում գումարվեց արցախահայության առաջին համագումարը: Լեռնային Ղարաբաղի բոլոր շրջաններից համագումար էին եկել 180 պատգամավորներ: Խորհրդակցական ձայնով մասնակցում էին նաև Շուշի քաղաքում գործող հասարակական հոսանքների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համագումարն Արցախը հայտարարեց վարչաքաղաքական անկախ միավոր, ընտրեց Ազգային խորհուրդ և կազմեց նոր կառավարություն՝ կոալիցիոն սկզբունքով: Այն ստացավ «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն» անունը[12]: Կառավարության իրավասությունը տարածվում էր ամբողջ գավառի վրա: Նորընտիր ժողովրդական կառավարությունը եռանդուն կերպով լծվեց տեղերում իշխանության մարմինների ստեղծման գործին: Քաղաքի և մերձակա շրջանների անվտանգությունն ապահովելու համար հուլիսի 27-ին հաստատվեց պարետություն: Գավառի ներքին խնդիրները լուծելու համար կառավարության հուլիսի 29-ի որոշմամբ ստեղծվեց չորս հանձնաժողով՝ ֆինանսական,

---

[7] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 30, թ. 24:*

[8] «Кавказское слово» (Тифлис), 15. IV. 1918.

[9] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 30, թ. 24:*

[10] *Տե՛ս նույն տեղում:*

[11] *Տե՛ս նույն տեղում, թ. 27–28:*

[12] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 49:*

պարենավորման, բժշկա-սանիտարական և վարչաիրավական: Գյուղական լիազորների փոխարեն նշանակվեցին գավառային և քաղաքային կոմիսարներ: Ջրաբերդ–Գյուլիստանում, Խաչենում, Դիզակում և Շուշիում հիմնվեցին հաշտարար դատարաններ: Իբրև բարձրագույն վճռաբեկ ատյան՝ Շուշիում ստեղծվեց շրջանային դատարան և նրան կից հատուկ գործերի քննիչ հանձնաժողով[13]*:*

Օգոստոսի 3-ին կառավարությունը բաց թողեց մի քանի շրջաբերականներ՝ սպեկուլյացիայի, փողի արժեզրկման, նպաստների, հայ–թաթարական հարաբերությունների մասին:

Շուշի քաղաքում գործում էին նաև հետևյալ հասարակական մարմինները՝ քաղաքային ինքնավարությունը, զինվորական միությունը, ոստիկանությունը և աղքատախնամ հոգաբարձությունը: Հարկ է ասել, որ նշված բոլոր մարմինները, բացառությամբ քաղաքային ինքնավարության, որը մեռած մարմնի տպավորություն էր թողնում, զուտ հայկական էին և գործում էին քաղաքի հայկական թաղամասում[14]*:*

Այսպիսով, «Ղարաբաղի ժողովրդական կառավարության» ստեղծումով ավարտվեց Ղարաբաղի հայկական անկախ իշխանության կազմավորման դժվարին գործընթացը: «Ղարաբաղի ժողովրդական կառավարության ստեղծումով հայերը հռչակեցին նրա անկախ գոյության իրավունքը, որը, հարկավ, սկսեց տհաճություն պատճառել թուրքերին»,– գրել է «Մշակ» թերթը[15]*:*

Ազգամիջյան խորացող ատելությունը վաղ թե ուշ գավառին կանգնեցնելու էր ներքին կռիվների ողբերգական փաստի առաջ, որից հետո այն մարելը գրեթե անհնարին կլիներ: Այդ բանի գիտակցումով էլ Ղարաբաղի իշխանությունները կտրականապես դեմ էին վիճելի հարցերը ուժային մեթոդներով լուծելուն և ամեն ինչ անում էին, որպեսզի նման հարցերը հանգուցալուծվեին քաղաքակիրթ ձևով՝ բանակցությունների միջոցով: Սակայն Ադրբեջանի ղեկավարությունը Լեռնային Ղարաբաղը նվաճելուց հրաժարվելու մտադրություն չուներ և սպասում էր հարմար պահի՝ իր ծրագրերն իրականացնելու համար: Պահը չուշացավ. Գանձակ էին շտապում Օսմանյան թուրքերը:

1918 թ. մայիսյան հերոսամարտերում հայ ժողովրդի անձնուրաց պայքարը ձախողեց Հայաստանի արևելյան հատվածը նվաճելու և նրա հայ բնակչությանը բնաջնջելու երիտթուրքական ծրագիրը: Սակայն հակառակորդը դեռ մեծ վտանգ էր ներկայացնում Հայաստանի ու ողջ երկրամասի համար: Բնավ էլ պատահական չէ, որ Հայաստանի օդը դեռ չէր մաքրվել մայիսյան կռիվների վառոդի ծխից, երբ թուրքական զորքերը Ղազախ–Աղստաֆա գծով շարժվեցին դեպի Բաքու՝ նպատակ ունենալով, մի կողմից, կանխել գերմանացիներին[16]*, մյուս կողմից՝ գրավել Բաքուն և*

---

[13] *Տե՛ս նույն տեղում, թ. 60:*

[14] *Տե՛ս «Հորիզոն» (Թիֆլիս), 17. IX. 1918:*

[15] *Տե՛ս «Մշակ», 23. II. 1919:*

[16] *1918 թ. ամռանը գերմանական հրամանատարության հիմնական խնդիրներից մեկը համարվեց Բաքվի գրավումը (տե՛ս* Э. Л ю д е н д о р ф. Мои воспоминания о войне 1914–1918 гг., т. 2. М., 1924, с. 219–220*):*

նախադրյալներ ստեղծել համաթուրքական նպատակների իրականացման համար:

Դեպի Բաքու շարժվող թուրքական բանակից առանձնացավ մի զորախումբ և Կովկասյան 2-րդ դիվիզիայի հրամանատարներից Ջեմիլ Ջահիդ[17] բեյի գլխավորությամբ գնաց դեպի Ղարաբաղ ու բանակատեղի դարձրեց Աղդամը՝ Լեռնային Ղարաբաղի սահմանային դարպասներից մեկը, որը բանալի էր գավառ ներխուժելու համար: Թուրք զորահրամանատարը, վստահ իր ուժերի վրա, ծրագրել էր սրընթաց գրոհով վերցնել Շուշին՝ Արցախ աշխարհի սիրտը և նրա հավերժության խորհրդանիշը: Մինչ այդ Նուրի փաշան Գանձակի հայերից ու թաթարներից բաղկացած մի պատվիրակություն ուղարկեց Շուշի՝ նրա բնակչությանը համոզելու ընդունել Ադրբեջանի հպատակությունը: Շուշեցիները «անհյուրասեր» գտնվեցին պատվիրակության անդամների նկատմամբ: Շուշի մտնելու հենց առաջին օրը բանագնացներին՝ կասկածելով հայրենիքի դավաճանության մեջ, շուշեցիները բանտարկեցին: Շուշիի մտավորականության ջանքերի շնորհիվ հաջողվեց հնգօրյա բանտարկությունից հետո նրանց ազատ արձակել: Դեպի Գանձակ հետդարձի ճանապարհը բռնած պատվիրակությանը շուշեցիները հրահանգեցին, որ իրենց անունից տաճկական հրամանատարությանը տեղյակ պահեն, որ իրենք վճռականորեն դեմ են Ադրբեջանի իշխանությանը[18]: Նուրի փաշան համոզվեց, որ Լեռնային Ղարաբաղի հայությունը համառորեն հրաժարվում է Ադրբեջանին ենթարկվելուց և ջանում է միանալ Հայաստանի Հանրապետությանը: Նա որոշեց բռնությամբ տիրանալ Արցախին: Ղարաբաղի վրա թուրքերի հարձակմանը նախորդեց Ղարաղշլաղ (ներկայիս Բերձոր) հայկական մեծ գյուղի կործանումը, որը ծանր հարված էր Ղարաբաղին: Գյուղը պատկանում էր Զանգեզուրի գավառին և սահմանակից էր Շուշի քաղաքին: Ղարաբաղի համար այն ուներ ռազմավարական նշանակություն. Գորիսից դեպի Շուշի միակ ճանապարհը անցնում էր Ղարաղշլաղով:

Սեպտեմբերի 6-ին՝ Ղարաղշլաղի անկումից երկու օր անց, Շուշիում հրավիրվեց Լեռնային Ղարաբաղի հայության երկրորդ համագումարը: Նրա աշխատանքներին մասնակցում էր 200 մարդ, այդ թվում՝ ներկայացուցիչներ քաղաքական բոլոր կուսակցություններից: Այն պետք է քննարկեր գավառի ներքին ու արտաքին կյանքին վերաբերող մի շարք հարցեր[19]: Ջահիդ բեյի անունից երկու վերջնագիր է ստացվում՝ մեկն ուղղված Ղարաբաղի հայոց հոգևոր առաջնորդին, մյուսը՝ գավառի հայ ազգաբնակչությանը[20]: Վերջնագիրը բովանդակում էր՝ երեք օրվա ընթացքում բոլոր զենքերը հանձնել տաճկական հրամանատարությանը և անձնատուր լինել[21]:

---

[17] *Մի շարք փաստաթղթերում հանդիպում ենք նաև Ջամիլ Ջավիդ ձևով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 66):*

[18] *Տե՛ս* Нагорный Карабах в 1918–1923 гг. Сборник документов и материалов. Отв. ред. В. А. Микаелян. Ереван, 1992, с. 20.

[19] *Տե՛ս «Նոր հորիզոն» (Թիֆլիս), 18. IX. 1918:*

[20] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 221, ց. 1, գ. 24, մաս 3, թ. 46, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 11:*

[21] *Տե՛ս «Մշակ», 22. II. 1919:*

Համագումարը, մեկ անգամ ևս արտահայտելով արցախահայության կամքը, անառարկելիորեն մերժում է թուրք բարձրաստիճան զինվորականի պահանջը և միաձայն արտահայտվում Հայաստանի Հանրապետության հետ միավորվելու օգտին: Այնուհանդերձ, հնարավոր առճակատումից խուսափելու համար համագումարը կազմեց պատվիրակություն, որը պետք է մեկներ Աղդամ և երես առ երես բանակցեր թուրքական հրամանատարության հետ[22]:

Երկրորդ համագումարը սեպտեմբերի 11-ի նիստում «Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը» վերանվանեց «Ղարաբաղի հայոց ժողովրդական խորհուրդ»: Այն պիտի իրագործեր համագումարի ընդունած շատ կարևոր մի որոշում՝ ընտրեր Աղդամ մեկնող պատվիրակության անդամներին: Երկու օր շարունակ խորհուրդը և քաղաքում գտնվող պատգամավորները զբաղված էին պատվիրակների ընտրությամբ: Ոչ ոք չէր ցանկանում մտնել պատվիրակության կազմ, ամեն ոք վախենում էր, թե իրեն ժողովուրդը պիտի նայի որպես դավաճանի: Ի վերջո, կազմվեց պատվիրակություն, որը սեպտեմբերի 15-ին մեկնեց Աղդամ ու ներկայացավ Ջահիդ բեյին: Վերջինս, որ արդեն տեղյակ էր համագումարի որոշումներին, առանց պատվիրակների խոսքը լսելու նրանց ներկայացրեց նոր պահանջներ. 1. հպատակվել Ադրբեջանի կառավարությանը, 2. զինաթափ լինել, 3. ճանապարհ տալ թուրքական և ադրբեջանական զորքերին անցնելու Շուշի[23]: Ջահիդ բեյը պատվիրակության անդամներից երկուսին՝ Հ. Մուսայելյանին ու Դ. Առաքելյանին, թույլատրեց վերադառնալ Շուշի այն պայմանով, որ տեղում իրենց խնդիրը կատարելուց հետո վերադառնան Աղդամ և իրազեկ դարձնեն Ղարաբաղի հայ ազգաբնակչության մտադրության մասին, իսկ մյուսներին բանտարկեց[24]: Սեպտեմբերի 16-ին պատվիրակության անդամները հասան Շուշի: Նոր համագումար հրավիրելու անհրաժեշտություն առաջացավ: 1918 թ. սեպտեմբերի 17–22-ին Շուշիում գումարվեց Ղարաբաղի հայության երրորդ համագումարը: Պատգամավորների ընդհանուր թիվը հասնում էր շուրջ 200-ի[25]: Համագումարի աշխատանքներն ընթանում էին բուռն վեճերի պայմաններում: Երեք օրվա քննարկումներից հետո (ելույթ ունեցավ 78 պատգամավոր) միակամ որոշվեց՝ արյունահեղությունից խուսափելու համար առանց կռվի գնալ համաձայնության[26]: Մինչ համագումարը զբաղված էր Ջեմիլ Ջահիդ բեյի վերջնագրի պատասխանը հստակեցնելով՝ սեպտեմբերի 19-ին Աղդամ ժամանեց Կովկասում գործող թուրքական բանակի գլխավոր հրամանատար Նուրի փաշան: Նույն օրը նա ազատ արձակեց բանտարկված պատվիրակներին և ուղարկեց Շուշի: Նուրին վերջնագիր ուղարկեց Շուշիի հայությանը՝ պահանջելով զինաթափվել ու ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Թուրք փաշան պատասխանի համար տալիս է 24 ժամ[27]:

---

[22] *Տե՛ս «Մշակ», 22. X. 1918:*
[23] *Տե՛ս «Մշակ», 27. II. 1919:*
[24] *Տե՛ս «Մշակ», 22. II. 1919:*
[25] *Տե՛ս նույն տեղում:*
[26] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 94, ֆ. 276, ց. 1, գ. 16, թ. 14–15:*
[27] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 69:*

Հայ պատվիրակները մեծ դժվարությամբ հասան Շուշի: Երրորդ համագումարը սեպտեմբերի 20-ի նիստում Նուրի փաշայի վերջնագիրը քննարկելուց հետո որոշեց թուրքերի հետ բանակցելու համար նոր պատվիրակություն ուղարկել Աղդամ[28]: Պատգամավորությանը չհաջողվեց նշված ժամկետում լինել Աղդամում, որովհետև գավառից եկած գյուղացիների մի մեծ խումբ, դժգոհ լինելով համագումարի որոշումից (արցախահայության գերակշիռ մեծամասնությունը դեմ էր թուրքերի հետ ամեն տեսակի զիջողության), թույլ չի տալիս նրանց մեկնելու: Ի վերջո, սեպտեմբերի 21-ին բանագնացների խումբը դուրս է գալիս Շուշիից: Խմբի հետ Ասկերան է ուղևորվում նաև քաղաքից ընտրված մեկ այլ պատվիրակություն՝ անդամակցությամբ Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոսի և Բյուզանդ վարդապետի, ովքեր պետք է Ասկերանի շրջանի գյուղացիներին հորդորեին խաղաղությամբ ընդունել թուրքերին և չդիմադրել նրանց Ասկերանով անցնելիս: Ասկերանում երկու պատվիրակության անդամներն էլ, մեղադրվելով հայրենիքի դավաճանության մեջ, բնակչության կողմից ձերբակալվում են: Թեմի առաջնորդից վերցնելով մեքենան՝ նրան ոտքով ուղարկում են Շուշի, իսկ մյուսներին բանտարկում Ասկերանի մոտ գտնվող Խանաբադ (Ոսկեվազ) գյուղում[29]: Որոշ մանրամասներ պարզելուց հետո՝ սեպտեմբերի 21-ին, նրանց ազատ են արձակում:

Թուրքական բանակի հրամանատարությունն արդեն սկսել էր զինաթափել հայերին: Այսպես, 1918 թ. սեպտեմբերի 20-ին Ջահիդ բեյը Խաչենի 20-ից ավելի հայկական գյուղերից պահանջեց ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և զինաթափ լինել: Արյունահեղությունից խուսափելու համար բնակչությունը հանձն է առնում զինաթափվել՝ պայմանով, որ թուրք ասկյարները չմտնեն գյուղերը և բռնություն չգործադրեն խաղաղ բնակչության նկատմամբ: Շատ շուտով ոսոխը բացահայտեց իր դեմքը, պարզ դարձավ, որ այդ հույսերն ապարդյուն են: Սեպտեմբերի 22-ին թուրքական զորքը մտավ Լեռնային Ղարաբաղ: Բանակի հրամանատարությունը և գավառապետ Խոսրով բեկ Ֆալատովը ծեծի ու սպանությունների սարսափի տակ ժողովրդից խլեցին բոլոր զենքերը և տեղափոխեցին Աղդամ[30]: Թուրք–թաթարական զինված կազմավորումները սեպտեմբերի 22–23-ին լայնածավալ հարձակում սկսեցին Ղարաբաղի վրա Քարագլուխից մինչ Միրուշեն[31]: Սկսվեց Ղարաբաղի արյունաներկ պատմությունը:

Թշնամին մեկը մյուսի հետևից գրավեց Ասկերանի աջ ու ձախ կողմերի Միրշանլու, Դահրազ, Վարազաբուն (Արանզամին), Փրջամալ, Նախիջևանիկ, Քյաթուկ, Խրամորթ, Խանաբադ (Ոսկեվազ), Քարագլուխ գյուղերը[32]: Թուրքական զորքերը Ջահիդ բեյի գլխավորությամբ շարժվում են դեպի Շուշի՝ ճանապարհին ավերելով ամեն ինչ: Ղարաբաղի ինքնապաշտպանական ուժերը գերադասեցին նրանց զինված դիմադրություն ցույց չտալ, որովհետև այդ դեպքում քաղաքում հայերի և թուրքերի միջև

---

[28] *Տե՛ս «Նոր հորիզոն», 19. X. 1918:*
[29] *Տե՛ս նույն տեղում:*
[30] *Տե՛ս Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Երևան, 1996, էջ 60:*
[31] *Տե՛ս նույն տեղում:*
[32] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3, թ. 418:*

կոտորածն անխուսափելի կդառնար: Շուշին առանց կռվի անձնատուր եղավ: Տաճիկ ասկյարները, որոնց թիվը հասնում էր շուրջ 2000-ի[33], Շուշի մտան սեպտեմբերի 24-ին: Նրանք տեղավորվեցին քաղաքի դպրոցական շենքերում, զորանոցներում ու թուրքական թաղամասում: Ասկյարներն ունեին ութ թնդանոթ և մի քանի տասնյակ գնդացիր: Զորքի հետ քաղաք էր ժամանել նաև մուսավաթական կառավարության պաշտոնական լիազոր Իսմայիլ խան Զիաթխանովը՝ հրահանգ ունենալով համոզել բնակչությանն ընդունելու Ադրբեջանի իշխանությունը[34]: Թուրքերը, գրավելով Շուշին, այնտեղ մտցրին ռազմական դրություն: Շուշիի պարետ նշանակվեց Նազմ բեյը, իսկ ընդհանուր նահանգապետ՝ Իսմայիլ խան Զիաթխանովը: Թուրքական տիրապետության հետևանքով Ադրբեջանի իշխանությունը տարածվեց Շուշի քաղաքի և Քարինտակ, Շոշ ու Ղայբալու գյուղերի վրա[35]: Ճիշտ է՝ Շուշին ընկել էր, բայց կանգուն էին մյուս շրջանները՝ Ջիվանշիրը, Ջրաբերդը, Դիզակը և Վարանդան: Հատկանշական է, որ դեռևս թուրքական հարձակման նախօրյակին այդ շրջանների զինված ուժերը ինքնաբերաբար համախմբվեցին գավառի աչքի ընկնող գործիչների շուրջը և չենթարկվեցին թուրքական հրամանատարությանն ու Ադրբեջանի կառավարությանը: Այսքանից հետո թուրքերը մոլորություն չունեին կարծելու, թե Շուշի մտնելը բավական է, որ իրենցը համարեն ողջ Լեռնային Ղարաբաղը: Ադրբեջանի թելադրանքով թուրք հրամանատարությունը ցրեց Ղարաբաղի կառավարությունը և զինաթափ արեց հայ բնակչությանը: Խուժելով քաղաք՝ տաճիկ ասկյարները, քրդերն ու տեղական թուրքերը սկսեցին կողոպտել հայերի տները, խանութները և կոտորել նրանց: Սարսափելի կոտորածն ու թալանը տևեցին երկու օր ու դադարեցին երրորդ օրը միայն՝ պարետ Նազմ բեյի հրամանով[36]: Թուրք–թաթարական ռազմամոլներն առաջին հերթին հաշվեհարդար տեսան Շուշիի հայ մտավորականության հետ: 1918 թ. հոկտեմբերի 1-ի գիշերը տաճիկ ասկյարները խուժեցին նրանց տները: Միայն այդ գիշեր ձերբակալվեցին մի քանի տասնյակ մտավորականներ՝ ավելի քան 60 հոգի[37]:

Շուշի քաղաքը ապրում էր խիստ ռեժիմի պայմաններում: Երեկոյան ժամը 7-ից հետո արգելվում էր փողոց դուրս գալ. ում տեսնում՝ ձերբակալում էին: Նույնիսկ քաղաքից դուրս կամ գյուղից քաղաք գնալու համար պահանջվում էր անցաթուղթ[38]:

Բնակչության գլխին կախված բոլոր տեսակի դժվարություններից ամենից սարսափելին սովն էր: Թուրքերի մուտք գործելուց հետո գյուղացիները բոյկոտ հայտարարեցին քաղաքին և թույլ չտվեցին, որ որևէ մեկը կենսամթերք բերեր քաղաք, դա էլ այն դեպքում, երբ քաղաքը կտրված էր

---

[33] *Տե՛ս «Նոր հորիզոն», 19. X. 1918: Որոշ աղբյուրներում այդ թիվը հասնում է 4000-ի (տե՛ս «Մշակ», 27. II. 1919) և 5000-ի (տե՛ս ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 16, թ. 16):*

[34] *Տե՛ս «Նոր հորիզոն», 19. X. 1918:*

[35] *Տե՛ս «Արձագանք» (Թիֆլիս), 15. VIII. 1919:*

[36] *Տե՛ս «Նոր հորիզոն», 27. IX. 1918:*

[37] *Տե՛ս «Նոր հորզոն», 19. X. 1918, «Արև» (Բաքու), 4. III. 1919:*

[38] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 323, ց. 1, գ. 1, թ. 44–46:*

դրսի աշխարհից, հաղորդակցություն չուներ թե՛ Գանձակի և թե՛ Գորիսի հետ[39]:

Այն օրերին, երբ թուրքերը շարժվում էին դեպի Շուշի, Ջիվանշիրի գավառի հայությունն անհավասար կռվում ջարդեց ու դուրս շպրտեց իր հողը ներխուժած թուրքերին: Ջիվանշիրում կրած ջախջախիչ պարտությունից հետո տաճկական բանակի հրամանատարությունը վճռում է գրավել Վարանդան: Թուրքական զինուժը առանց դիմադրության հանդիպելու մտավ Շոշ, այնուհետև՝ Տոնավարգ և Խաչմաչ գյուղերը: Հոկտեմբերի 17-ի երեկոյան թշնամին հասավ Վարանդայի Սմմնա գյուղը և գիշերեց այնտեղ: Զենքի ընդունակ բնակչությունը ոտքի կանգնեց: Ամենուր կազմակերպվեցին աշխարհազորային ջոկատներ: Նույն օրը հայկական մի ջոկատ՝ Ասլան Մուրադխանյանի (Ասլանիկ) գլխավորությամբ, ամրանում է Մաշադիշեն գյուղի մոտ ընկած բարձունքներում՝ փակելով դեպի Ամարասի ձոր տանող միակ ճանապարհը: Հայ զինյալները փակեցին նաև դեպի Շուշի տանող նահանջի ուղիները: Գիշերվա խրախճանքը դեռ չվայելած՝ թուրք ասկյարները և թաթար զինվորները հոկտեմբերի 18-ի լուսաբացը դիմավորեցին շրջապատման մեջ ընկած[40]: Շրջապատումից դուրս գալու թշնամու բոլոր ջանքերը ապարդյուն անցան. կռիվը տևեց մի ամբողջ օր: Հակառակորդը մարտադաշտում թողեց մի քանի տասնյակ զինվոր, նաև 3 թնդանոթ, 4 գնդացիր և ռազմամթերքով բեռնավորված 30 ջորի: Ոսոխի կենդանի մնացած աննշան թվով զինվորները, օգտվելով մառախլապատ եղանակից, ծածուկ քաշվում են դիմացի անտառը, իսկ այնտեղից գիշերով մեծ դժվարությամբ հասնում Շուշի[41]:

Այսպիսով, Շուշին ընկավ, սակայն Արցախի գավառները թշնամու համար մնացին անմատչելի: Վարանդայի, Դիզակի, Խաչենի և Ջրաբերդի զորահրամանատարներն այդ շրջաններում ամբողջ իշխանությունը կենտրոնացրին իրենց ձեռքը և պաշտպանեցին երկիրը վերահաս վտանգից մինչև անգլիական ներկայացուցչության գալը:

1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարով Թուրքիան զորքերը հետ քաշեց Անդրկովկասից, մաքրեց նաև Ղարաբաղը: Անդրկովկասում թուրք–գերմանական նվաճողներին փոխարինեցին անգլիացի «խաղաղարարները»:

Շուշիից թուրքական զորքերի հեռանալուց հետո՝ 1918 թ. նոյեմբերի սկզբին, քաղաք մտավ անգլիական մի ռազմական ներկայացուցչությունը՝ մայոր Գիպոնի գլխավորությամբ: Քաղաքի հայությունը մեծ ոգևորությամբ դիմավորեց «ազատարարներին»[42]: Մայորն իր հրամանատարության անունից տեղեկացրեց, որ այս ներկայացուցչությունն ուղարկված է գեներալ Թոմսոնի կողմից, ով դաշնակից զորքերի հրամանատարն է Բաքվում, ապահովելու է օրենքն ու կարգը Շուշիի շրջանում: Ապա հայտարարեց, որ քաղաքական ու տարածքային խնդիրները

[39] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, մաս 3, թ. 418:*
[40] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 65:*
[41] *Տե՛ս «Արև», 21. II. 1919:*
[42] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 204:*

ներկայացուցչությանը չեն վերաբերում և պիտի լուծվեն Փարիզի խաղաղարար կոնֆերանսում[43]:

Մուսավաթական Ադրբեջանը անգլիական ռազմական ներկայացուցչության գիտությամբ ու ակտիվ մասնակցությամբ ձգտում էր անել այն, ինչը նրան չհաջողվեց թուրքերի օգնությամբ: Բրիտանական ռազմական ներկայացուցչության Ղարաբաղ մուտք գործելուց հետո տեղի քաղաքական ուժերի մեջ ուրվագծվում է երկու ուղղություն: Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի և Ղարաբաղի զորքերի ընդհանուր հրամանատար Սոկրատ բեկ Մելիք-Շահնազարյանի գլխավորած հոսանքը բռնել էր անգլիացիներին հլու-հնազանդ ենթարկվելու ուղին: Նրանք գտնում էին, որ պետք է ենթարկվել դաշնակիցների կամքին, անտեղի արյուն չթափել, համբերատար սպասել վեհաժողովի արդար վճռին: Հակառակ դեպքում դա կարող է վնասել Արցախի դատին: Իսկ դաշնակցության Ապառաժի (Ղարաբաղ) կոմիտեն և Ղարաբաղի ժամանակավոր Հայոց Ազգային խորհուրդն անհմաստ էին համարում անգլիացիների հետ հույսեր կապելը, առավել ևս նրանցից օգնություն և աջակցություն սպասելը: Նրանք Արցախի հարցի լուծումը իրավացիորեն կապում էին ազատագրական պայքարի հետ և ճիգ էին գործադրում զենքի ենթակա բնակչությունից զինյալ խմբեր ստեղծելու ուղղությամբ:

Այդ ընթացքում Ադրբեջանը մեծ թվով զորամասեր էր ուղարկում Լեռնային Ղարաբաղ և նրանց տեղավորում գավառի ռազմավարական նշանակություն ունեցող կետերում: Օրինակ՝ Խանքենդ ավան մտցրին «Վայրի դիվիզիայի» մի զորամաս, թվով 1500 զինվոր՝ թնդանոթներով ու գնդացիրներով զինված: Մինչ այդ Ադրբեջանը զորք էր մտցրել Ասկերան: Ադրբեջանական զինուժ կենտրոնացվեց նաև Շուշիում: Այստեղ գտնվող զինվորների թիվը հասցվեց 1000-ի[44]: Արցախի ռազմական ուժերի դիմադրությունը ճնշելու և գավառը վերջնականապես գրավելու նպատակով՝ Ադրբեջանի մարտական ուժերը թուրք սպաների հրամանատարությամբ հարձակումներ են սկսում տարբեր ուղղություններով: Նրանք ավերածությունների ենթարկեցին Ասկերանի շրջանը: Այդ օրերին Արցախում կատարվող իրադարձությունների վերաբերյալ արխիվային տարբեր փաստաթղթերում տեղ գտած վկայություններում նշվում է, որ թուրք-թաթարական կանոնավոր զորքերը սահմռկեցուցիչ վայրագություններ կատարեցին նաև Դիզակի և Վարանդայի գյուղերում[45]: Եվ այդ ամենը կատարվում էր անգլիական ներկայացուցչության աչքի առաջ, իսկ վերջինս կույր ու խուլ գտնվեց կատարվածի հանդեպ: Ավելին, երբ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը հայ ազգաբնակչության նկատմամբ գործադրվող սպանդի կապակցությամբ բողոքեց անգլիացիներին, նրանք անամոթաբար պատասխանեցին, որ իրենք քաղաքական խնդիրներով չեն զբաղվում, իրենց նպատակն է օգնել գաղթականությանը և

---

[43] *Տե՛ս «Մշակ», 2. III. 1919:*

[44] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 40, թ. 11–12:*

[45] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 74, թ. 52:*

զբաղվել Ղարաբաղի տնտեսական հարցերով[46]: Դրությունը շարունակում էր բարդանալ:

1919 թ. հունվարի 15-ին Ադրբեջանի կառավարությունը հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովին նշանակեց Շուշիի, Զանգեզուրի, Ջեբրայիլի, Ջիվանշիրի, այսինքն՝ Ելիզավետպոլի նահանգի հարավարևելյան հայկական գավառների գեներալ-նահանգապետ[47]: Այդ նշանակումը կատարվեց արցախահայության կամքին հակառակ: Փետրվարի 28-ին Շուշիի անգլիական ներկայացուցչությունը, հանձին Մոնկ Միզոնի, երբ դիմում է Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդին և պահանջում ճանաչել Խոսրով բեկ Սուլթանովի գեներալ-նահանգապետությունը, ստանում է հստակ պատասխան. «Հայկական Ղարաբաղը չի կարող հաշտվել նման փաստի հետ, որովհետև կախումը Ադրբեջանի կառավարությունից, ինչպիսի ձևով էլ այն արտահայտվելու լինի, Ղարաբաղի հայությունը համարում է անընդունելի»[48]: Նույն բովանդակությամբ նամակ–հանձնարարական է ուղղվում նաև հայկական զորամասերի հրամանատարներին: Վերջիններս պատասխանում են, որ իրենք լիովին պաշտպանում են Ազգային խորհրդի տեսակետը[49]:

Նորաթուխ նահանգապետը ժամանեց Շուշի փետրվարի 10-ին և բնակության վայր ընտրեց քաղաքի թաթարական թաղամասը: Փետրվարի 20-ին բրիտանական ներկայացուցչությունը կազմեց մի նախագիծ, որով սահմանեց Սուլթանովի լիազորությունները: Ըստ այդմ՝ գեներալ-նահանգապետին կից ստեղծվում էր խորհուրդ՝ կազմված երեք հայերից, նույնքան էլ մուսուլմաններից և անգլիական ներկայացուցչության անդամներից: Նահանգապետի քաղաքացիական մասի օգնականը լինելու էր հայ[50]:

Երկրամասի ժամանակավոր կառավարման նախագիծը հակառակ սկզբունքներով էր կազմել Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը: Այդ նախագծի համաձայն՝ մինչև խաղաղության կոնֆերանսի որոշումը, հայկական Ղարաբաղը ղեկավարվելու էր հետևյալ կերպ. ա) կառավարումը կենտրոնանում է մարզային խորհրդի ձեռքում՝ կազմված 7 հոգուց, նստավայր ունենալով Շուշին: բ) Հատուկ համաձայնությամբ խորհրդի կազմում մտնում են մեկական ներկայացուցիչ Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններից: գ) Բրիտանական ներկայացուցչությունը խորհրդի աշխատանքի նկատմամբ վերահսկողության իրավունք ունի: Նա կարող է փոխել կամ կարճել խորհրդի ցանկացած որոշում: դ) Պաշտոնատար բոլոր անձինք նշանակվում են խորհրդի կողմից: ե) Կողմերի զորամասերի տեղափոխությունները կատարվում են ներկայացուցչության գիտությամբ և համաձայնությամբ: Գլխավոր ռազմավարական կետերում տեղաբաշխվում են բրիտանական զորամասերն ու ուղեկալները[51]:

---

[46] *Տե՛ս «Հառաջ» (Երևան), 29. I. 1919:*
[47] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 244, թ. 1:*
[48] *Տե՛ս «Մշակ», 16. III. 1919, 19. III. 1919, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 28–30:*
[49] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 429, թ. 2–4:*
[50] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 5, թ. 1–2, «Մշակ», 19. III. 1919:*
[51] *Տե՛ս «Մշակ», 22. III. 1919, «Ժողովուրդ» (Երևան), 6. IV. 1919:*

Անգլիական ներկայացուցչության և նրա ղեկավար Թոմսոնի կողմից հայկական նախագիծը չընդունվեց:

Լեռնային Ղարաբաղում և Զանգեզուրում ադրբեջանական գեներալ-նահանգապետի նշանակումը զայրացրեց Հայաստանի Հանրապետությանը: 1919 թ. հունվարի 21-ին Հայաստանի կառավարությունը պաշտոնապես Ադրբեջանի կառավարությանը հայտարարեց, որ ինքը չի կարող ընդունել, նույնիսկ ժամանակավոր, Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղի վրա, որը կազմում է Հայաստանի անբաժան մասը[52]: Խոսրով բեկ Սուլթանովը, որի իշխանությունը գործնականում տարածվում էր միայն Շուշի քաղաքի թուրքական թաղամասի և Խանքենդ ավանի վրա, զանազան միջոցների էր դիմում, որպեսզի տեղական իշխանության մարմինները և պետական նախկին հիմնարկությունները կենտրոնացնի իր ձեռքում: Իր դիվային ծրագրերի իրականացման խնդրում նա փորձում էր ստանալ Ղարաբաղի նշանավոր մարդկանց ու քաղաքական գործիչների աջակցությունը: Այդ նպատակով Սուլթանովը զրույցի հրավիրեց Շուշիի քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանին, եպիսկոպոս Վահանին, Ե. Իշխանյանին և Գ. Մինասբեկյանին: Ժողովրդի պահանջով այդ հանդիպումը հետաձգվեց: Սուլթանովը հրավեր ուղարկեց նաև քաղաքի հայկական թաղամասի կառավարիչներին և ժողովրդական ու քաղաքային դպրոցների ուսուցիչներին՝ նպաստ ստանալու, պայմանով, որ նրանք նախապես ստորագրությամբ հաստատեն, որ ճանաչում են Ադրբեջանի իշխանությունը: Սուլթանովի այս քայլը ևս - ձախողվեց: Հայ բնակչությունը անկախությունը վեր դասեց նպաստ ստանալուց՝ ասելով, որ «Մեր խիղճը դրամով չենք կարող ծախել»[53]: Այս ամենից հետո Սուլթանովի կարգադրությամբ փակվեց քաղաքի հայկական թաղամասում գտնվող գանձատունը և արգելվեց ամեն կարգի վճարում կատարելը: Միաժամանակ նա բոլոր պաշտոնյաներին հայտարարեց, որ նրանք գանձարանից ռոճիկ կստանան այն դեպքում, երբ կտան ստորագրություն, որ 1919 թ. հունիսի 1-ից առ այսօր ծառայում են Ադրբեջանի կառավարությանը և այսուհետ էլ պիտի ծառայեն[54]:

Ադրբեջան–Անգլիա–Սուլթանով եռյակի ագրեսիվ քաղաքականությանը դիմագրավելու համար անհրաժեշտ էր մշակել պատասխան գործողությունների ծրագիր: Դա կարող էր անել միայն Ղարաբաղի հայության նոր համագումարը: 1919 թ. փետրվարի 10-ից 21-ը Շուշիում գումարվեց արցախահայության 4-րդ համագումարը, որին մասնակցում էր 50 պատգամավոր: Համագումարը քննարկեց Ադրբեջանին և նոր նշանակված գեներալ-նահանգապետին ցույց տրվելիք վերաբերմունքի հարցը: Արտահայտելով ժողովրդի միասնական կամքը՝ համագումարը որոշում է. «Չճանաչել Ադրբեջանի իշխանությունը հայկական Ղարաբաղի սահմաններում և բողոքել բրիտանական ներկայացուցչությանը, Բաքվի բրիտանական զորքերի հրամանատար Թոմսոնին, Հայաստանի Հանրապետությանը, Ադրբեջանի

---

[52] *Տե՛ս «Ժողովուրդ», 26. III. 1919, «Աշխատավոր» (Թիֆլիս), 12. III. 1919:*

[53] *«Արև», 26. III. 1919:*

[54] *Տե՛ս «Հառաջ», 25. IV. 1919:*

պառլամենտի նախագահին՝ Ադրբեջանի ոտնձգությունների դեմ»[55]: Համագումարն ընտրեց Ազգային խորհուրդ և հանձնարարեց նրան ստեղծել զինվորական շտաբ, որը պետք է զբաղվեր երկրի պաշտպանության հարցերով[56]:

Դեպքերը զարգանում և իրար էին հաջորդում չափազանց արագ: Թաթարական բանդաները փակել էին Շուշի տանող ճանապարհները: Սուլթանովը Ղարաբաղը հեշտությամբ նվաճելու հույս էր փայփայում: 1919 թ. փետրվարի 25-ին իր կառավարությանն ուղղված բացատրագրի մեջ վստահեցնում էր, որ ինքը քայլ առ քայլ, առանց ֆիզիկական ուժ գործադրելու կկարողանա ստիպել հայերին, որ նրանք ընդունեն Ադրբեջանի իշխանությունը[57]:

Ինչ վերաբերում է Շուշիում անգլիական ներկայացուցչության գործունեությանը, ապա նա ենթադրում էր, որ եթե խիստ միջոցներ կիրառի Ղարաբաղի Ազգային խորհրդի ազդեցիկ անդամների նկատմամբ, հնարավոր կլինի Արցախը ենթարկել Ադրբեջանի իշխանությանը: Նա սկսեց բռնության ու հալածանքի քաղաքականությունը: Նախ, Շուշիից հեռացրեց հանրային գործիչներ Գ. Բալայանին և Լ. Զառաֆյանին, ովքեր նոր էին եկել Բաքվից, և բնական է, որ իրենց կարճատև գործունեության ընթացքում դժվար թե առիթ տված լինեին որևէ կերպ կասկածելու իրենց:

Դրան հաջորդեցին նոր խաղեր: Անգլիական հրամանատարությունը Բաքու հրավիրեց վեց հայ պատգամավորի: Ազգային խորհուրդն ընտրեց Բաքու մեկնող պատվիրակություն՝ Շուշիի քաղաքագլուխ Գ. Մելիք-Շահնազարյանի ղեկավարությամբ[58]: 1919 թ. մարտի 26-ին Բաքվում Ղարաբաղի պատվիրակները հանդիպում ունեցան գնդապետ Շատելվորդի հետ: Հարկ ենք համարում ընթերցողի ուշադրությանը հանձնել նրա հետ զրույցից մի հատված: Շատելվորդի այն հարցին, թե ինչի է ձգտում Ղարաբաղի հայությունը, պատվիրակության անդամներից Ասլան Շահնազարյանը պատասխանում է. «Դեպի մեծ Հայաստանը, որի հետ նրա լեզվական, մշակութային և տնտեսական կապերը ընդհանրական են»[59]: Ադրբեջանի գերիշխանությունը ճանաչել տալու Շատելվորդի ջանքերն ապարդյուն անցան:

Ապրիլի 3-ին բրիտանական զինվորական ներկայացուցչության անունից Շատելվորդը դիմում է Ղարաբաղի հայ բնակչությանը՝ առանց դիմադրության ընդունելու Ադրբեջանի իշխանությունը[60]: Հայաստանի կառավարությունը բողոքեց այդ հայտարարության դեմ և կատարեց գործնական քայլեր Հայաստան–Արցախ վարչական համապետական միասնության հաստատման ուղղությամբ: Ապրիլի 11-ի որոշմամբ ծնունդով շուշեցի, ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Միքայել Արզումանյանը նշանակվեց Շուշիում անգլիական ներկայացուցչությանը կից Հայաստանի

---

[55] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 18–19, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս 1, թ. 223:*
[56] *Տե՛ս նույն տեղում:*
[57] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 11–12:*
[58] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 293, թ. 45–47:*
[59] *Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 10–11, ֆ. 252, ց. 1, գ. 5, թ. 4–5:*
[60] *Տե՛ս «Հառաջ», 25. IV. 1919:*

Հանրապետության ներկայացուցիչ[61]: Հաջորդ քայլը եղավ Շատելվորդի այցը Արցախ: Նա Ազգային խորհրդից վերջնագրի ձևով պահանջեց իր ներկայությամբ լուծել Ադրբեջանին հպատակվելու հարցը[62]: Նրա մասնակցությամբ արցախահայության ներկայացուցիչները հրավիրում են 5-րդ համագումարը, որը սկսվեց ապրիլի 23-ին և տևեց մինչև ապրիլի 29-ը: Համագումարը լսեց Շատելվորդի «Ղարաբաղի ժամանակավոր իշխանության վարչական ծրագիրը» զեկուցումը, որում ջանում էր համագումարին խաբելով, համոզելով, սպառնալով, բարոյական ճնշում գործադրելով հասնել նրան, որ պատգամավորները Ղարաբաղը ճանաչեն Ադրբեջանի կազմում: Ապրիլի 24-ի նիստում տեղի ունեցավ զեկուցման ծավալուն քննարկումը: Երկար քննարկումից հետո համագումարը հանգեց միասնական եզրահանգման. «... անհնարին և անընդունելի է համարում Ադրբեջանի հետ առնչություն ունեցող որևէ ծրագիր և այդ ծրագրի բռնի իրականացումը կյանքի մեջ համարում է անխուսափելի պատճառ՝ ստեղծելու ազգամիջյան լուրջ խմորումներ»[63]:

Ղարաբաղում վճռական գործողություններ ծավալելուց առաջ Սուլթանովը ցանկացավ արցախահայությանը խեղդել սովի միջոցով: Գեներալ-նահանգապետի կարգադրությամբ մայիսի 20-ից հայերի առջև փակվեցին Դաշտային Ղարաբաղի հետ կապող բոլոր ճանապարհները: Ամենուր ժողովուրդը հեծում էր սովի ճիրաններում: Բաքվում լույս տեսնող «Արև» թերթի հուլիսի 27-ի համարում կարդում ենք. «Վարանդան և Խաչենը կանգնած են սովի դռանը, իսկ մի շարք գյուղերում արդեն սով է»[64]: Սարսափելի էր հայ գաղթականության՝ Գանձակում և գավառում ապաստանած 1915 թ. վերապրողների դրությունը: Ամենասոսկալին երկրամասում տիրող անիշխանությունն էր: Անիշխանության և թողտվության հետևանքով Ղարաբաղում օր օրի ծաղկում էր ավազակությունը, թալանը և մարդասպանությունը: Սա դեռ բոլորը չէ: Ղարաբաղում իր սև «գործն» էր անում համաճարակը, որը խլում էր հազարավոր մարդկային կյանքեր[65]:

Շարունակվող տնտեսական բոյկոտը դարաբաղցիներին ստիպեց դիմել համապատասխան քայլերի: Ազգային խորհրդից նրանք պահանջեցին քոչվորների (մայիսի 27-ին զինված բանդաների ուղեկցությամբ քոչվորները բռնեցին սար տանող ճանապարհը) ճանապարհը փակելու թույլտվություն: Սակայն Ազգային խորհուրդը, որը շարունակաբար ուղիներ էր որոնում երկու հարևան ժողովուրդների միջև խաղաղությունը վերականգնելու համար, դա անթույլատրելի համարեց[66]:

Բոլորովին հակառակ գործելակերպ էր որդեգրել Սուլթանովը. հունիսի 2-ին առանց որևէ նախազգուշացման զանձատունը և հեռագրատունը քաղաքի հայկական թաղամասից փոխադրեց ադրբեջանական թաղամաս: Հայության արյան ծարավ բժիշկը նույն օրը Շուշիի ադրբեջանական թաղամաս

---

[61] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50, մաս 1, թ. 154:*
[62] *Տե՛ս «Հառաջ», 24. IV. 1919:*
[63] *Տե՛ս «Ժողովուրդ», 14. V. 1919, □Արև□, 30. IV. 1919, 18. V. 1919:*
[64] *«Արև», 27. VII. 1919:*
[65] *Տե՛ս «Արև», 9. IV. 1919:*
[66] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 171–172:*

մտցրեց քրդական մի բանդա, թվով 3 հազար մարդ, ինչպես նաև 1500 զինված ադրբեջանական զորախումբ: Հունիսի 2-ին և 3-ին Շուշիի հայկական թաղամասից բոլոր ադրբեջանցիները ծածուկ հեռացան ադրբեջանական թաղամաս: Հունիսի 3-ին թուրքական զորամասերը փակեցին Շուշիից դեպի Գորիս տանող խճուղին[67]: Համակողմանի նախապատրաստությունից հետո՝ հունիսի 4-ին՝ առավոտյան ժամը 10-ին, Սուլթանովի հրամանով սկսվեց Շուշիի հայկական թաղամասի գնդակոծումը: Այդ օրը քաղաքի թուրքական թաղամաս աշխատանքի մեկնած 50 հայից վերադառնում է 7-ը, իսկ մնացածներին քրդերը գազանաբար հոշոտում են[68]: Շուշիի հայկական թաղամասի գնդակոծումը տևեց շուրջ 16 ժամ: Ադրբեջանցի զինվորներն ու քրդական բանդան մտան քաղաքի հայկական թաղամաս և սոսկալի ավերածություններ կատարեցին[69]: Այդ օրերին քաղաքի թուրքական մասում մորթվեց 40 հայ[70]:

Սուլթանովի հրոսակախմբերն իրենց «բարձրության» վրա գտնվեցին նաև Ղայբալիշեն գյուղը կործանելիս: Այն գտնվում է Շուշիի հարևանությամբ: Գյուղի վրա հարձակումը սկսվեց հունիսի 5-ին՝ գիշերվա ժամը 10-ին: Գազազած հրոսակները, մտնելով գյուղ, սոսկալի ոճրագործություն կատարեցին. 70 տուն ունեցող գյուղը մեկ օրվա ընթացքում վերածվեց մոխրակույտի, հարյուրավոր մարդիկ սրի քաշվեցին, որոնց մեծ մասը երեխաներ էին, կանայք ու ծերեր: Ըստ Ղարաբաղի դեպքերը քննող պառլամենտական հանձնաժողովի արձանագրության՝ Ղայբալիշենի կործանման ժամանակ սպանվեց 500 մարդ: Եկեղեցին քարուքանդ է արվել: Տների ավերակներում կիսախանձ դիակներ են: Գետինը ծածկված էր երեխաների դիակներով: Ղայբալիշենի մոտ գտնվող մատուռում մորթվել էր 50 հայ[71]: Այլ աղբյուրների վկայությամբ՝ գյուղի 700 բնակիչներից փրկվել էին 100–180 մարդ[72]: Ըստ ականատեսների՝ այն պահին, երբ թուրք-քրդական բանդան հոշոտում էր խաղաղ բնակչությանը, բրիտանական ներկայացուցչության անդամները Սուլթանովի տան պատուհանից հրճվանքով դիտում էին այդ «տեսարանը»[73]:

Թուրք-քրդական զինված խմբերը արյունահեղություններ կազմակերպեցին նաև քաղաքամերձ Կրկժան, Փահլուր, Ջամիլու գյուղերում՝ կոտորելով հարյուրավոր մարդկանց:

Հունիսի 7-ին թշնամին հարձակվեց Քարինտակ ու Դադուշեն գյուղերի վրա և հանդիպելով բնակչության լուրջ դիմադրությանը՝ նահանջեց[74]:

Անգլիական հրամանատարության կողմից Շուշի մեկնած գնդապետ Գլատերբերգը, ծանոթանալով կատարված արյունալի անցքերին, Շատել-վորդին ներկայացրած զեկուցագրում համարձակություն ունեցավ խոստովանել

---

[67] *ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 64:*
[68] *Տե՛ս «Ժողովուրդ», 22. VI. 1919:*
[69] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 64:*
[70] *Տե՛ս «Պահակ» (Բոստոն), 14. VI. 1919:*
[71] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 168–172:*
[72] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, թ. 387, գ. 76, թ. 12:*
[73] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 92:*
[74] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 557, թ. 26:*

ճշմարտությունը. «... պիտի ընդունել, որ կոտորածը նախապես ծրագրված է եղել Սուլթանովի կողմից»[75]: Վերջում նա պահանջում է կատարած հանցավոր քայլերի համար դատի տալ Սուլթանովին: Այդ կապակցությամբ Սուլթանովին գլխավոր հանցագործ է ճանաչում նաև տեղում հարցը ճշտելու նպատակով Շուշի մեկնած Ադրբեջանի պառլամենտականներից կազմված հանձնաժողովը: Պառլամենտին ներկայացված հանձնաժողովի եզրակացության մեջ պարզ ու որոշակի ասված է, որ Շուշիում ու գյուղերում կոտորածների նախաձեռնողն ու կազմակերպիչը եղել է Սուլթանովը: Խորհրդարանը, սակայն, գտավ, որ Ղարաբաղի «տեղական իշխանության և հատկապես ընդհանուր նահանգապետի գործողությունների մեջ չկա ապօրինության և ոչ մի փաստ»[76]:

Ղարաբաղի դեպքերի առիթով Բաքվի Հայոց Ազգային խորհրդի նախագահության անդամները տեսակցություն ունեցան Ուսուբբեկովի հետ, որը 1919 թ. ապրիլի վերջերից գլխավորում էր Ադրբեջանի նոր մինիստրական կաբինետը: Այդ կապակցությամբ արտահայտելով իր տեսակետը՝ նա ցինիկորեն ասել է. «Որքան էլ ցավալի լինեն Ղարաբաղի վերջին անցքերը, իմացած եղեք, որ դրանք վերջինը չեն լինելու, քանի դեռ Ղարաբաղի հայկական գավառները կշարունակեն իրենց դիմադրությունը Ադրբեջանի դեմ»[77]:

Հունիսյան եղեռնագործությունը չընկճեց Ղարաբաղի հայ ազգաբնակչությանը: Ավելին, այդ իրադարձությունները արցախահայությանը մեկընդմիշտ համոզեցին, որ պետք չէ հավատալ անգլիացիներին ու դաշնակից մյուս պետություններին և նրանց հետ հույսեր կապել: Նա լիովին հասկացավ, որ իր հայրենիքի ու իր օջախի պաշտպանը միայն ինքն է ու իր թիկունքին կանգնած մայր Հայաստանը: Դրա խոսուն ապացույցը հունիսյան դեպքերին անմիջապես հաջորդող օրերին Ղարաբաղի գավառներում տեղի ունեցող գյուղացիական 5-րդ և 6-րդ համագումարներն էին և դրանց ընդունած որոշումները՝ երբեք չենթարկվել Ադրբեջանին, այլ միանալ Հայաստանի Հանրապետությանը[78]:

Արցախահայության անկոտրում կամքը ճզմելու և գավառը վերջնականապես բռնազավթելու Ադրբեջանի ջանքերն էլ ավելի սաստկացան: Դրան հակառակ Արցախի տեղական իշխանությունները փորձում էին ստանալ խնդիրը խաղաղ լուծելու Ադրբեջանի համաձայնությունը մինչև Փարիզի խորհրդաժողովի կողմից հիմնահարցի լուծումը: Հարցի այդօրինակ լուծման համար Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը հրավիրեց արցախահայության 7-րդ համագումարը: Սուլթանովը Ազգային խորհրդից պահանջում է համագումարը հրավիրել Շուշի քաղաքում: Շուշին լավ ամրացված էր, այստեղ տեղակայված էին ադրբեջանական զորամասեր և քրդական զինված խմբեր: Օգտագործելով այդ հնարավորությունները՝ Սուլթանովը կարող էր խիստ վերահսկողություն սահմանել համագումարի աշխատանքների վրա և պատգամավորների նկատմամբ ֆիզիկական ու բարոյական

---

[75] *Տե՛ս «Պահակ», 26. VIII. 1919, ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 168–171:*

[76] *Տե՛ս «Պահակ», 26. VIII. 1919:*

[77] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 168–170:*

[78] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 210–214, 233–234, □Արձագանք□, 24. VI. 1919:*

ճնշումներ գործադրելով՝ կայացնել Ադրբեջանի համար առավել ընդունելի որոշումներ: Ի հակադրություն Սուլթանովի՝ համագումարը գումարվեց Շոշ գյուղում օգոստոսի 12-ին[79]: Սուլթանովը օգոստոսի 14-ին կարգադրեց հրանոթներ տեղադրել Շոշ գյուղի ու Շուշի քաղաքի հայկական թաղամասերի ուղղությամբ և փակել տվեց Եվլախ–Շուշի ճանապարհը: Նույն օրը նա վերջնագիր ներկայացրեց համագումարին և պահանջեց 48 ժամվա ընթացքում ընդունել Ադրբեջանի իշխանությունը[80]: Պատգամավորների մի մասը պնդում էր, որ պետք է ընդունել Սուլթանովի մարտահրավերը և համագումարի անունից արցախահայությանը նոր պայքարի կոչել: Սակայն Վահան եպիսկոպոսին և նախագահության անդամներին հաջողվում է համոզել պատգամավորների ճնշող մեծամասնությանը, որ Ադրբեջանի դեմ պայքարելու համար ներքին ու արտաքին պայմանները նպաստավոր չեն: Օգոստոսի 15-ին պատգամավորները որոշեցին ժամանակավորապես ընդունել վերջնագիրը: Համագումարի կողմից ընտրված պատվիրակությունը մեկնեց Շուշի և Սուլթանովի հետ ստորագրեց 26 կետից բաղկացած մի համաձայնագիր, ըստ որի Ղարաբաղի լեռնային մասը՝ Շուշիի, Ջիվանշիրի, Ջեբրայիլի գավառները, ժամանակավորապես մտնում են Ադրբեջանի Հանրապետության սահմանների մեջ[81]:

Ադրբեջանական կողմը շարունակաբար խախտում էր համաձայնագրի պայմանները: Ավելին, 1920 թ. փետրվարի 19-ին Սուլթանովն իր կառավարության անունից Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդին հայտարարեց, որ այլևս խաղաղության վեհաժողով գոյություն չունի, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծվի սեփական նախաձեռնությամբ, և Ազգային խորհրդից պահանջեց առաջիկա համագումարում վերջնականապես վճռել Ադրբեջանին ենթարկվելու հարցը[82]: Ի պատասխան Սուլթանովի վերջնագրի՝ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը 1920 թ. փետրվարի 28-ին Շոշ գյուղում հրավիրում է 8-րդ համագումարը[83]: Համագումարը Շուշիում գումարելու Սուլթանովի ցանկությունը, կարելի է ասել, կատարվեց մասամբ: Բանն այն է, որ Ազգային խորհուրդը նախապես տեղեկացնում է համագումարի պատգամավորներին քաղաք չգալ, այլ հավաքվել Շոշ գյուղում: Դժբախտաբար, Ազգային խորհրդին չի հաջողվում այդ մասին տեղյակ պահել բոլոր պատգամավորներին: Դա էր պատճառը, որ համագումարին հրավիրված 127 պատգամավորներից 50-ը հավաքվեցին Շուշիում, իսկ 77-ը՝ Շոշ գյուղում[84]: Շոշ գյուղի համագումարը վերստին արտահայտելով հայության անբեկանելի կամքը՝ իր ընդունած բանաձևով մերժում է Խոսրով բեկ Սուլթանովի պահանջը և կրկին բարձրաձայնում է Հայաստանի Հանրապետության հետ վերամիավորվելու մասին[85]: Ինչ վերաբերում է Շուշիի համագումարին,

---

[79] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 202, թ. 7–8:*
[80] *Տե՛ս նույն տեղում:*
[81] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 9, թ. 67–68:*
[82] *Տե՛ս «Հառաջ», 19. III. 1920, 4. IV. 1920:*
[83] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4047, ց. 1, գ. 155, թ. 1:*
[84] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 21, թ. 34–35:*
[85] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 29–35:*

ապա այն Սուլթանովի ճնշման տակ ընդունում է Ադրբեջանի շահերից բխող որոշումներ:

Ադրբեջանը և նրա թիկունքին կանգնած Թուրքիան լիովին հասկացան, որ Արցախի հարցը լուծելու ճանապարհը մեկն է՝ արցախահայության բնաջնջումը: Այդ նպատակի համար Ադրբեջանը մեծաթիվ զինուժ կենտրոնացրեց Ղարաբաղի գավառում: Ստույգ տվյալներով 1920 թ. գարնանը Ղարաբաղում կենտրոնացված էր ավելի քան 10 հազար զինվոր: Շտապ կազմակերպվեց քրդական մի դիվիզիա: Շուշի ժամանեց Նուրի փաշան՝ 10 թուրք սպաների ուղեկցությամբ[86]: Մարտի 11-ին և 12-ին Բաքվից Ջեբրայիլի վրայով Ղարաբաղ և Զանգեզուր ուղարկվեց 90 վագոն՝ բեռնված զենքով ու զինամթերքով[87]:

Մարտի 20-ին Սուլթանովի կարգադրությամբ թուրք-թաթարական մեծաթիվ զորքերը սկսեցին բռնությամբ զինաթափել բնակչությանը և կոտորել նրանց: Թաթարները պատրաստվում էին մեծ հանդիսավորությամբ նշել Նովրուզ բայրամը՝ ամանորը: Տոնակատարությանը մասնակցելու անվան տակ (իրականում հայերին կոտորելու) Խանքենդից զորքը, հրամանատարական կազմով, բերվեց Շուշի զորահանդեսի: Շուշի եկան նաև Ադդամի թուրք բեկերը, ինչպես նաև Ղարաբաղի տարբեր շրջաններից հարյուրավոր մուսուլմաններ: Շուշիի հայությանը ևս կարգադրված էր մինչև մարտի 22-ը զենքերը հանձնել: Ժամկետը լրանալուց հետո՝ նույն օրը՝ առավոտյան, Սուլթանովի հրամանով զինվորական պահակախմբերը սկսում են շրջել քաղաքի հայկական թաղամասում և խուզարկել բնակարանները:

Լեռնային Ղարաբաղի և Զանգեզուրի դեմ Ադրբեջանի լայնածավալ հարձակումը սկսվեց մարտի 22-ին: Մուսավաթական բանակի հարվածային ուժերը թուրք սպաների հրամանատարությամբ կենտրոնացել էին Ադդամ–Ասկերան–Խանքենդ–Շուշի խաչուղու, իսկ արևմտյան կողմից՝ Քիրս–Տումի–Խծաբերդ ուղղություններում[88]: Հայկական զինված ջոկատները հարձակման անցան ռազմավարական նշանակություն ունեցող Ասկերանի, Շուշիի և Խանքենդի վրա: Մարտի 22-ին Խանքենդի ուղղությամբ գործող հայկական ուժերը, թշնամուն մեծ կորուստներ պատճառելով, գրավում են Խոջալուն և Խանքենդը: Մարտի 23-ին Արցախի քաջարի մարտիկները գրավեցին Ասկերանի բերդը և հարվածելով հակառակորդին՝ քշեցին մինչև Ղարաղաջ[89]:

Արցախում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների կիզակետը դարձավ Շուշիի հայ ազգաբնակչության սպանդը: Զորքը և մուսուլման բնակչությունը մի ամբողջ օր՝ մարտի 23-ին, արյան խրախճանք են կատարում քաղաքում: Հայ բնակչության մեծ մասը սրի է քաշվում, սպանվում են հազարավոր տղամարդիկ, կանայք, ծերեր և երեխաներ: Ոչ ստույգ տվյալներով Շուշիում զոհվածների թիվը հասնում էր մոտ 8 հազարի: Մահից փրկված Շուշիի հայության բեկորները, թվով 5–6 հազար

---

[86] *Տե՛ս «Ժողովուրդ», 26. III. 1920:*

[87] *Տե՛ս* Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 431.

[88] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, գ. 1, գ. 34, թ. 220:*

[89] *Տե՛ս նույն տեղում, թ. 222–223:*

մարդ, մազապուրծ փախան Վարանդ և Դիզակ[90]: Ըստ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդի կազմած վիճակագրության՝ կործանված գյուղերից ու շեներից մոտ 20 հազար չափահաս և ավելի քան 4 հազար անչափահաս մարդ ապաստան գտան Վարանդայի, Դիզակի և մասամբ Զանգեզուրի գյուղերում[91]:

Բազմակողմանի նախապատրաստությունից հետո՝ մարտի վերջին, թուրքերը միաժամանակ երեք՝ Ասկերան–Շուշի խճուղու, Աղդամ–Վանք և Կարաչինար–Էրքեջ ուղղություններով սկսեցին հակահարձակումը: Թուրքերը կատաղի մարտեր ծավալեցին Ասկերանի ուղղությամբ: Բազմաթիվ անհաջող հարձակումներից հետո թշնամին ապրիլի 3-ին գրավեց Ասկերանը[92]:

Ապրիլի 6-ին Շուշի քաղաքից սկսվեց Շոշ և Քարինտակ գյուղերի գնդակոծումը: Ապրիլի 7-ին թուրքերը մեծ ուժերով գրավեցին Խանքենդը և ուղղություն վերցրին դեպի հարավ՝ Կարյագինո: Ապրիլի 12-ին մուսավաթական բանակին հաջողվեց գրավել հայկական մի շարք գյուղեր և ընդհուպ մոտենալ Քեշիշքենդ ու Սղնախ գյուղերին: Այստեղ նրանց առաջխաղացումը կասեցվեց[93]:

Դիզակի ռազմաճակատում գործող հայկական ուժերը պետք է լուծեին կարևոր խնդիր՝ առաջանալ դեպի Զանգեզուր և գրավել մուսուլմանների ռազմավարական հենակետերը՝ հաղորդակցությունը Զանգեզուրի հետ վերականգնելու համար: Հակառակորդին մի շարք մարտերում ծանր պարտության մատնելուց հետո՝ հայկական ուժերը մտնում են Ղարաղշլաղ գյուղը և ճանապարհ բացում դեպի Զանգեզուր:

Արցախահայերի համար վերջապես եկավ երկար սպասված ցանկալի պահը: Հայաստանի Հանրապետության կառավարության կարգադրությամբ 1920 թ. ապրիլի 14-ին Զանգեզուրի կողմից Արցախի Վարանդա գավառ մտան հայկական զորամասերը Դրոյի հրամանատարությամբ և մի քանի օրվա ընթացքում Ղարաբաղը մաքրեցին թուրք-թաթարական զորքերից: Սուլթանովն իր զինված կազմավորումներով պատսպարվեց շրջափակման մեջ գտնվող Շուշիում: Ի դեպ, Շուշին և Խանքենդը շրջափակվել էին այնպես, որ ոչ մի կապ չունեին դրսի աշխարհի հետ: Շուշիում պաշարված թուրքերը Աղդամի հետ իրենց կապը պահպանում էին գիշերները գույնզգույն լապտերների ու զանազան ազդանշանների միջոցով[94]: Դրոյի անմիջական նախաձեռնությամբ ստեղծվեց Արցախի ժամանակավոր կառավարություն՝ «Վարիչների խորհուրդ» անունով: Ստեղծվեց բանակի ընդհանուր հրամանատարություն՝ Դրոյի գլխավորությամբ: Ղարաբաղի և Զանգեզուրի միջև սկսվեց ազատ հաղորդակցություն: Կազմակերպվեց սայլերի գումակ, որի միջոցով Զանգեզուրից և այլ վայրերից շարունակաբար զենք, զինամթերք ու պարեն էր հասցվում Ղարաբաղ: Բոլոր ճակատներն ու ռազմավարական նշանակության բնակավայրերը միացվեցին

---

[90] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, թ. 179, մաս 2, թ. 245, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 145:*

[91] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 69, «Հառաջ», 12. V. 1920:*

[92] *Տե՛ս նույն տեղում, թ. 234–235,* Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 435.

[93] *Տե՛ս «Հառաջ», 12. IX. 1920:*

[94] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 34, թ. 270–274:*

հեռախոսային գծերով[95]: Դրոյի առաջնահերթ խնդիրն էր ապահովել Արցախի անվտանգությունը և լուծել գավառը Հայաստանին վերամիավորելու հարցը: Նրա մասնակցությամբ ապրիլի 25-ին Թաղավարդ գյուղում գումարվեց արցախահայության 9-րդ համագումարը, որը մեկ անգամ ևս արձանագրեց. «Հրչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը՝ որպես նրա անբաժան մաս»[96]:

Քաղաքական նոր զարգացումները, սակայն, փոխեցին իրավիճակը: Ապրիլի 28-ին Ադրբեջանում հաստատվեցին խորհրդային կարգեր: Բաքվի բոլշևիկյան հեղաշրջումից հետո ռուսական կարմիր բանակի զորամասերը մոտեցան Արցախի սահմաններին: Ադրբեջանի բոլշևիկ կառավարողները ապրիլի 30-ին և մայիսի 8-ին Հայաստանի կառավարությանը ներկայացրին վերջնագիր՝ պահանջելով հայկական զորամասերը դուրս բերել Լեռնային Ղարաբաղի սահմաններից: Մինչ Հայաստանի կառավարությունը ուղիներ էր փնտրում վիճահարույց հարցերի խաղաղ կարգավորման համար, Շուշիի և Զանգեզուրի շրջաններում հայ-թաթարական կոտորածները կանխելու պատրվակի տակ մայիսի 11-ին, Կովկասյան ճակատի հրամանատարության հրամանով, 11-րդ կարմիր բանակի ձախաթևյան զորամասերը շարժվեցին Նախիջևանի, Օրդուբադի և Շուշիի շրջանները[97]: Մայիսի 12-ին Շուշի մտավ 11-րդ կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի 281-րդ գունդը՝ հրամանատար Աբուզարովի և զինկոմ Գայդալովի ղեկավարությամբ: Ղարաբաղ եկան մի շարք բարձրաստիճան սպաներ: Կարմիր բանակի զորամասերը հսկում էին Արցախի ռազմավարական կարևորագույն կետերի վրա, իսկ Ադրբեջանի կառավարությունն էլ վերջնագրային լեզվով պահանջում էր երեք օրվա ընթացքում ենթարկվել իրեն: Արցախահայությունը զայրացած և վրդովված էր Սուլթանովի՝ Ղարաբաղը խորհրդայնացնելուն ուղղված ջանքերից: Մայիսի 6-7-ին Լեռնային Ղարաբաղի գյուղացիության պաշտպանության կոմիտեն Վ. Լենինին հասցեագրված (պատճեն Ն. Նարիմանովին) հեռագրում հայտնում է, որ չի վստահում Ղարաբաղի հեղկոմի կոչին. «... որովհետև Շուշիի հեղկոմից ծանուցագիրը նա ստացել է այն պահին, երբ գնդացիրների ու հրանոթների որոտը շարունակում է ոչնչացնել խաղաղ հայ բնակչությանը...»[98]:

Մայիսի 18-ին Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեի ներկայացուցիչներ Ս. Տեր-Գաբրիելյանն ու Լևանդովսկին հանդիպեցին Դրոյին և խորհրդային իշխանության անունից պահանջեցին հայկական զորամասերը դուրս բերել Լեռնային Ղարաբաղից[99]: Հանդիպման արդյունքների մասին Դրոն հեռագրեց Հայաստանի կառավարությանը: Դրանում ասված էր. «Ռուսական բանակների մոտենալը Ջիվանշիրին, Թարթառ գյուղի գրավումը և հարյուրավոր կարմիրների մուտք գործելը Մերկուրդիպոր և Քասապետ գյուղերը,

---

[95] *Տե՛ս նույն տեղում, թ. 270–273:*
[96] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 461, թ. 144:*
[97] *Տե՛ս* Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 464–465.
[98] *Տե՛ս նույն տեղում, էջ 457:*
[99] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 2, թ. 336:*

վերջնականապես բարոյալքեցին մեր գյուղացիությանը: Ջիվանշիրում հռչակվեցին խորհրդային կարգեր: Խաչենը վարակվել է բոլշևիզմով… Անհնարին է, որ հայ գյուղացին դիմադրություն ցույց տա ռուս բոլշևիկներին»[100]:

Մայիսի 22-ին տեղի ունեցավ Ղարաբաղի ժամանակավոր կառավարության վերջին նիստը: Կառավարությունը համոզմունք հայտնեց, որ երկրամասում ստեղծված իրավիճակում դրությունը կարող են փրկել տեղական բոլշևիկները՝ իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով և Ղարաբաղը հայտարարելով Խորհրդային Ռուսաստանի մաս, այլ ոչ թե Ադրբեջանի[101]: Մայիսի 23-ին Հայաստանի կառավարությունը Արցախից տեղեկություն ստացավ այն մասին, որ Խաչենը, Ջիվանշիրը և Գյուլիստանը, ուր մտել է ռուսական կարմիր բանակը, իրենց հռչակել են խորհրդային[102]: Համաձայն նույն լուրերի, Վարանդան և Դիզակը նույնպես տրամադրված չէին դիմադրություն ցույց տալու ռուսական զորքերին[103]:

Այսպիսով, քաղաքական հանգամանքները դասավորվեցին այնպես, որ Դրոն մայիսի 26-ին իշխանությունը հանձնեց բժիշկ, բոլշևիկ Սաքո Համբարձումյանին և հաջորդ օրը՝ մայիսի 27-ին, իր զորամասով հեռացավ Արցախից և վերադարձավ Գորիս՝ ամբողջ զինանոցը և պարենի պահեստները թողնելով ղարաբաղցիներին[104]:

Մայիսի 28-ին Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ արցախահայության 10-րդ - համագումարը, որը Լեռնային Ղարաբաղը հռչակեց խորհրդային և ստեղծեց հեղկոմ՝ Ս. Համբարձումյանի նախագահությամբ: Միաժամանակ ստեղծվեց նաև Դաշտային Ղարաբաղի հեղկոմ՝ Բ. Վելիբեկովի նախագահությամբ: Հունիսի 16-ին Լեռնային Ղարաբաղի և Դաշտային Ղարաբաղի հեղկոմները միավորվեցին, կենտրոնը դարձավ Շուշի քաղաքը: Միացյալ հեղկոմի նախագահ նշանակվեց Բ. Վելիբեկովը, իսկ Ս. Համբարձումյանը՝ կուսակցության Շուշիի գավառային կոմիտեի առաջին քարտուղար:

Այսպիսով, ռուսական կարմիր բանակի օգնությամբ և բոլշևիկյան Ռուսաստանի ղեկավար գործիչների հովանավորությամբ Ադրբեջանն իր ներկայացուցիչներին դրեց Ղարաբաղի կուսակցական և խորհրդային ղեկավար պաշտոններում ու սկսեց աստիճանաբար նվաճել Ղարաբաղը: Այլ կերպ ասած՝ ինչին չկարողացավ հասնել մուսավաթական Ադրբեջանը թուրքերի և բրիտանացիների օգնությամբ, Արցախին անհամեմատ հեշտությամբ տիրացավ «կարմիր» Ադրբեջանը խորհրդային կարգերի քողի տակ:

---

[100] *Տե՛ս նույն տեղում, գ. 563, թ. 193:*
[101] *Տե՛ս Հ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 243:*
[102] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 2, թ. 336:*
[103] *Տե՛ս նույն տեղում, գ. 563, թ. 198:*
[104] *Տե՛ս նույն տեղում, գ. 427, մաս 2, թ. 336:*

ШУШИ В АРЦАХСКОЙ БОРЬБЕ ЗА ВЫЖИВАНИЕ (1918–1920 гг.)

ГАМЛЕТ АРУТЮНЯН

Р е з ю м е

После приобретения независимости мусаватистское правительство Азербайджана поставило цель оккупировать неотделимую часть исторической Армении–Нагорный Карабах, Зангезур и Нахичеван. Арцахские армяне встали на борьбу против злостного врага ради свободы и независимости своей родины. Оплотом этой борьбы стал город-крепость Шуши. Крупномасштабные планы Азербайджана открыто поощряла и способствовала их осуществлению Турция, через некоторое время – британские оккупанты и Советская Россия. Однако героическая борьба за выживание арцахских армян с целью воссоединения с Арменией не получила логической развязки вследствие большевистского переворота в Баку. 11 мая 1920 г. воинские части 11-й Красной армии вошли в Нагорный Карабах. В Карабахе установилась советская власть.

SHUSHI IN THE STRUGGLE FOR EXISTENCE OF ARSAKH (1918–1920)

HAMLET HARUTYUNYAN

S u m m a r y

After the acquisition of independence, the Musavat government of Azerbaijan intended to conquer the indivisible part of historical Armenia – Nagorno-Karabakh, Zangezur and Nakhijevan. The Armenians of Artsakh rebelled against the mean enemy and fought for the independence of their native country. The fulcrum of that struggle was the fortress of Shushi. Expansive plans of Azerbaijan were obviously encouraged and contributed to the implementation by Turkey, later by the British conquerors and also by the Soviet Russia. However, the heroic struggle for uniting with Armenia did not have a logical solution because of the Bolshevik coup in Baku. On May 11, 1920 the military units of the 11th Red Army penetrated to Nagorno-Karabakh. Soviet power was established in Karabakh.